



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

456-Ա/2

27

04

2017թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2017
ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 20-Ի N 415-Ա/2 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի N 1507-Ն հրամանով հաստատված կարգի 23-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջներով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2017 թվականի ապրիլի 20-ի «2017 թվականի 2-րդ քննաշրջանի (մայիս - հունիս քննաշրջան)՝ դրսեկության ձևով (էքստեռն) ավարտական քննությունների կազմակերպման և անցկացման աշխատակարգը և ժամանակացույցը հաստատելու մասին» 415-Ա/2 հրամանի՝

1) Հավելված N1-ի՝

ա. 1-ին կետից հանել «և «Օտար լեզու» (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն կամ ռուսերեն)» բառերը.

բ. 1-ին կետի 2-րդ ենթակետում «Հայոց պատմություն» բառերից հետո լրացնել «Օտար լեզու» (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն կամ ռուսերեն)» բառերը.

2) Հավելված N2-ի «Հիմնական կրթության վկայական ստանալու համար քննությունների կազմակերպման ժամանակացույց» բաժնի 11-րդ տողում «07.03.2017թ.» թվերը փոխարինել «07.06.2017թ.» թվերով:



ԼԵՎՈՆ ՄԿՐՏՅԱՆ